

ՇՆՈՐՀՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Ամենախնամ եւ միշտ ողորմած Տէր, քու անսահման բարերարութիւններուդ վրայ՝ նաեւ մարդոց պարգեւեցիր աստուածաշունչ Կրակարաններուդ մէջ դրոշմուած ճշմարիտ օրէնքդ, որպէսզի անկէ սորվելով քու սուրբ կամքիդ արտացոլացունը եղող պատուիրաններդ, վանոնք կատարենք միշտ քու կամքիդ համաձայն, մեր հոգիներու փրկութեան եւ օգուտին համար:

Կ'աղաչե ւմ, Տէր, իմաստութեանդ լո՛յսը ծագէ եւ վերանորոգող հզօր Հոգիիդ շնորհքները թափէ իմ խաւարած հոգիիս մէջ, եւ իմ մտքիս մէջ դրոշմէ աստուածային երկիւղդ եւ ջերմեռանդութիւնը, որպէսզի արժանի կերպով կարդամ աստուածաշունչ քու Մատեանդ, բարեպաշտ հաւատքով ու յարգանքով, եւ յօժար սրտով ու սիրով ականջ դնեմ անոր մէջ պարունակուած բոլոր խօսքերուն: Տո՛ւր ինձի նաեւ շնորհքը՝ աներկմիտ հաւատքով հաւատալու եւ ընդունելու անոր մէջ բովանդակուած ճշմարտութիւնը, որպէսզի անխախտ յոյսով ապաւինիմ խոստացուած բարիքներուն, շնորհքներուն եւ յաւիտենական կեանքին՝ Սուրբ Հոգիիդ շնորհքովը. որուն փանօք յաւիտեանս: Ամէն: